3.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան
Մ. Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի
«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»
բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի

Մարդկային կապիտալը (Human Capital) հասարակության մտավոր, ֆիզիկական, բնական, առողջապահական և այլ ռեսուրսների հավաքական ամբողջությունն է, որը օգտագործվում է անհատների և հասարակության՝ որպես մեկ ամբողջության բազմազան կարիքների բավարարման համար: Մարդկային կապիտալը համարվում է զարգացման բարդ ինտենսիվ գործոն, մտնում է երկրի ազգային հարստության կազմի մեջ: Այն ներառում է քաղաքական, սոցիալական կապիտալը, ազգային մրցակցային առավելությունները և ազգի բնական ներուժը:

Առաջին անգամ «մարդային կապիտալ» տերմինը օգտագործել է Թեոդոր Շուլցը, նա ընդգծում էր կրթական կապիտալի՝ որպես ՄԿ առանցքային բաղադրիչի կարևորությունը երկրի տնտեսության զարգացման գործում: Ամերիկացի տնտեսագետը հետազոտություններ էր իրականացնում՝ պարզելու հետպատերազմյան շրջանում (երկրորդ աշխարհամարտից հետո) Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսության արագ տեմպերով վերականգնման պատճառահետևանքային կապերը: Նա եկավ այն եզրահանգման, որ Գերմանիայի և Ճապոնիայի տնտեսությունների արագ վերականգնման հանգամանքը

պայմանավորված էր կրթված և առողջ բնակչություն ունենալու իրողությամբ[1]:

Նշված երկրների փորձը կարող է նաև օրինակ լինել Հայաստանի Հանրապետության համար: Զրկված լինելով բնական ռեսուրսներից, միևնույն ժամանակ գտնվելով շրջափակման մեջ՝ ՀՀ-ն կարող է զարգանալ մարդկային կապիտալի առաջընթացի միջոցով, քանի որ ազգաբնակչության բարեկեցության ապահովման տեսանկյունից, թերևս, էական նշանակություն չունեն առկա մարդկային ռեսուրսների քանակական ծավալները: Քիչ չեն այն ազգերն ու պետությունները, որոնք տիրապետում են թվաքանակով մեծ մարդկային ռեսուրսների, այնուհանդերձ, այդ ռեսուրսների անարդյունավետ կառավարման հետևանքով կանգնել են տնտեսական և քաղաքական լուրջ հիմնախնդիրների առջև: Կրթության, գիտության ոլորտում անհրաժեշտ և համարժեք ներդրումների իրագործման հարցում պետության և հասարակության փոխհամաձայնությամբ մշակված ռազմավարությունը հնարավորություն է տալիս առկա ՄԿ կիրառությունից ակնկալել որակական հետադարձ արդյունք: Կրթության զարգացումը, համապատասխան և նպատակաուղղված ներդրումները, տալիս են մրցունակ մարդկային ռեսուրսներ, որոնք էլ իրենց հերթին նպաստում են տնտեսության զարգացմանը: Այս գործընթացն էլ իր հերթին շարունակական է այնքանով, որ տնտեսության զարգացումը և ստեղծված հավելյալ արժեքը հնարավորություն են տալիս նորանոր ներդրումներ իրականացնել կրթության և գիտության ոլորտում (գծապատկեր 1):



ՀՀ-ում կրթական լուրջ ներդրում էր Դիլիջանի միջազգային դպրոցը, որը նպատակ ունի միջազգային որակյալ կրթությունը հասանելի

1. Տե՛ս Мельместер Ж.Л., Дьебо К.В., Экономика образования:невыполненные обещания // “Экономика образования”, 2009, էջ 85:

դարձնել երիտասարդների համար՝ անկախ ազգությունից և նրանց ծնողների ֆինանսական հնարավորություններից: Դպրոցի հիմնական նպատակներն են

1. ՀՀ կրթական համակարգի համար որակական նոր կողմնորոշիչների սահմանումը,
2. տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը,
3. տվյալ նախագծի հիմնական նպատակներին հասնելու համար մարտավարական և ռազմավարական նպատակների սահմանումը:

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում նոր ներդրողներ ներգրավել և կրթական զարգացմանը զուգընթաց նպաստել տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:

ՀՀ-ում մարդկային կապիտալի արգասիքներից է նաև ՏՏ ոլորտի զարգացման նախադրյալներն ու հնարավորությունները: Այս ոլորտում առկա առաջխաղացումն ու նվաճումները խոսում են մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման մասին: Դրա վառ ապացույցն է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, որն իրենից ներկայացնում է կրթական ծրագիր տեխնոլոգիաների և դիզայնի միջակայքում: Այժմ Հայաստանում գործում է 4 Թումո կենտրոն Երևանում, Գյումրիում, Դիլիջանում և Ստեփանակերտում:

Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, որն ընդգրկում է 2014-2025 թթ. Ժամանակահատվածը և հանդիսանալու է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ռազմավարական փաստաթուղթն ու մշակվելիք միջնաժամկետ, ոլորտային և այլ ծրագրային փաստաթղթերի հիմքը, ներառում է տարվող քաղաքականության գերակայությունները, որոնց մեջ տեղ է գտել նաև մարդկային կապիտալի զարգացումը[1]: Այս մասին ՀՀ-ն փաստում է ամենաբարձր պետական մակարդակով: Նմանատիպ քաղաքականությունը կարող է միայն նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը:

ՄԿ տեսություններում առանձնացվում է նաև ազգային ՄԿ հասկացությունը, որը տվյալ հասարակության ազգային հարստության հիմնական բաղկացուցիչն է: Ազգային ՄԿ-ն ներառում է տվյալ պետության և հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կապիտալը, ազգային մտավոր ռեսուրսները, ազգային մրցունակության

[1] Տե՛ս Վ. Հովսեփյան, Անցումային տնտեսության տեսություն, Եր., 2008, էջ 74:

առավելությունները և ժողովրդի բնական պոտենցիալը: Ազգային ՄԿ-ն հաշվարկվում է նրա արժեքայնության ցուցիչով: Ազգային ՄԿ-ն կազմում է յուրաքանչյուր զարգացող երկրի ընդհանուր հաշվարկով ազգային հարստության ավելի քան կեսը, իսկ զարգացած երկրների համար՝ վերջիններիս ազգային հարստության ավելի քան 70-75%-ը: Աշխարհի տարբեր երկրների Ազգային ՄԿ արժեքը, ծախսատարության մեթոդաբանության հաշվարկի հիման վրա, գնահատվել է Համաշխարհային բանկի փորձագետների կողմից: Հաշվարկներում օգտագործվում են ՄԿ բաղկացուցիչ մասերի գնահատականներն ըստ պետության, ընտանիքի, գործարարների և այլ ծախսերի հաշվարկների, որոնք հնարավորություն են տալիս սահմանել ՄԿ վերարտադրմանն ուղղված հասարակության տարեկան ընթացիկ ծախսերը: Այդ փորձագիտական գնահատականների համաձայն՝ 20-րդ դարի վերջերին ՄԿ համաշխարհային արժեքը հաշվվում էր $365 տրլն, որը կազմում էր համաշխարհային հարստության 66%-ը: ԱՄՆ ՄԿ արժեքը կազմում էր $95 տրլն կամ երկրի ազգային հարստության 77%-ը, կամ համաշխարհային ՄԿ արժեքի 26%-ը: Չինաստանի ՄԿ արժեքը հաշվվում էր $25 տրլն, որը կազմում էր երկրի ազգային հարստության 77%-ը կամ համաշխարհային ՄԿ ընդամենը 7%-ը: Ռուսաստանի ՄԿ արժեքը հաշվարկվում էր $30 տրլն, ինչը կազմում էր երկրի ազգային հարստության 50%-ը կամ համաշխարհային ՄԿ 8%-ը:

Հայաստանը World Economic Forum-ի նոր զեկույցում մարդկային կապիտալի զարգացման ցուցանիշով տարածաշրջանում առաջատարն է[1]:

The Global Human Capital Index 2017-ը դասակարգել է աշխարհի 130 երկիր ըստ մարդկային կապիտալի զարգացման՝ արտահայտված 4 չափումով՝

- պոտենցիալի իրացում,
- զարգացում,
- բացահայտում,
- նոու-հաու:

Հայաստանն աշխարհի 130 երկրի ցանկում զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը՝ զարգացնելով իր մարդկային կապիտալի 64%-ը: Պոտենցիալի իրացման ենթակետի առումով Հայաստանն աշխարհում 3-

[1] www.weforum.org

րդն է: Այս կետը քանակական գնահատական է տալիս կրթությանը՝ ներառյալ դպրոցական և բուհական ուսման մակարդակը: Հայաստանի հարևան երկրներից Վրաստանն ու Ադրբեջանը զեկույցում չկան, իսկ Թուրքիան 75-րդ տեղում է, Իրանը՝ 104: ԱՊՀ տարածաշրջանից Ղազախստանը 29-րդ տեղում է, Ղրղզստանը՝ 46, Մոլդովան՝ 62, Ռուսաստանը՝ 16, Տաջիկստանը՝ 57: Ցանկում առաջատարը Նորվեգիան է, հաջորդում են Ֆինլանդիան ու Շվեյցարիան: Եմենը, Մավրիտանիան ու Սենեգալը աղյուսակի վերջին հորիզոնականներում են:

Սակայն մյուս կողմից, չնայած կատարվող աշխատանքներին և առկա փոփոխություններին, Հայաստանում նկատվում է մտավոր ռեսուրսների կայուն արտահոսք, որը կրիտիկական նշանակություն ունի երկրի անվտանգության տեսանկյունից: Ունենալով սահմանափակ մտավոր ՄԿ՝ երկրում շեշտադրումները կատարվում են հիմնականում տնտեսության այնպիսի ճյուղերի վրա, որոնք, որպես կանոն, չեն պահանջում մտավոր ռեսուրսներ:

Հայաստանի ներքաղաքական վերջին փոփոխությունների ֆոնին կարծես մարդկային կապիտալին՝ որպես ազգային վերելքին խթանող գործոն, ավելի մեծ դեր տալու հորիզոններ են երևում: Եթե նախկինում երկրում շատ ու շատ անհատներ սուբյեկտիվ գործոնների ազդեցության տակ չկարողացան դրսևորել իրենց ունակությունները և ծառայեցնել երկրի շահերին, ապա այժմ նոր իրավիճակը թելադրում է երկրում առկա մարդկային ռեսուրսը ավելի արդյունավետ կերպով ընդգրկել տնտեսական ու քաղաքական տարբեր հարցերում, դրսևորելու հնարավորություն տալու տարբեր ոլորտների խելացի կադրերին, տնտեսության մեջ ներդրումների հնարավորություն ընձեռել մանր, միջին և խոշոր ձեռնարկատիրությամբ զբաղվել ցանկացողներին, ովքեր, նախկինում տարբեր ոլորտներում առկա մոնոպոլ և օլիգոպոլ դիրքերի չարաշահումների հետ կապված, չէին կարողանում շուկայում գործունեություն ծավալել:

Այս ամենի համատեքստում շատ կարևոր դեր ունի պետությունը, որը երկրի բնակիչների անմիջական աջակցությամբ մարդկային կապիտալի զարգացման բեռը պետք է իր ուսերին կրի ու համապատասխան պայմաններ ստեղծելով՝ պետք է երկրի տնտեսական կյանքում բարեփոխումներ կատարի ու նպաստի մարդկային կապիտալի՝ որպես ազգային հարստության գիտակցման ամրապնդմանը: Շատ կարևոր է մարդկային կապիտալը դիտարկել որպես ազգային վերելքին

նպաստող ռեսուրս, արդյունավետ օգտագործել մարդկային ներուժը և պայմաններ ստեղծել «ուղեղների արտահոսքից» խուսափելու համար: Ինչպես նաև չպետք է աչքաթող անել հայկական սփյուռքի գործոնը. Հայաստան-սփյուռք կապերի խորացումը, գիտատեխնոլոգիական, կրթական միջնաժամկետ և երկարաժամկետ համատեղ ծրագրերի նախաձեռնումն իր հերթին կարող է նպաստել սփյուռքի հայ երիտասարդության գիտական ներուժի օգտագործմանը, փորձի արդյունավետ փոխանակմանը:

Բանալի բառեր՝ *մարդկային կապիտալ, տնտեսության զարգացման նախադրյալներ, հեռանկարային զարգացում, մարդկային կապիտալի զարգացում:*

Օգտագործված գրականություն

1.Վ. Հովսեփյան, Անցումային տնտեսության տեսություն, Եր., 2008:
2. Мельместер Ж.Л., Дьебо К.В., Экономика образования:невыполненные обещания // “Экономика образования”, 2009.
3. Макконнел К. Р., Брю С. Л. Экономикс. М., 1992.
4. Park. S., Revisting Mankiw, Romer & Weil, A Contribution to the Empirics of Economic Growth/ University of Micigan, 1992.
5. www.weforum.org

DEVELOPMENT OF HUMAN CAPITAL AS A GUARANTEE OF ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

S. G. AMIRKHANYAN
PhD in Economics, Associate Professor
Dean of the Faculty of Economics of GSU
M. M. TOVMASYAN
Master's Degree, 1st year student,
Department of "Finance,
Money Circulation and Credit"
Faculty of Economics

The human capital is the collective whole of mental physical, natural, health and the other resources of society, which is used to meet the diverse needs of individuals and society. Human capital is considered as a complex intensive factor of development. It includes the national wealth of country.

РАЗВИТИЕ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА КАК ГАРАНТИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

С. Г. АМИРХАНЯН
Кандидат экономических наук, доцент
Декан экономического факультета ГГУ
М. М. ТОВМАСЯН
Студентка 1 курса магистратуры отделения «Финансы, денежное обращение и кредит»ГГУ

Человеческий капитал - зто сборное целое умственного, физического, природного, здравоохранительного и других ресурсов общества, которое используется для удовлетворения как одного целого различных потребностей личностей и общества.

Человеческий капитал очитается сложным интенсивным фактором развития, входим в состав национального богатства государства.